

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԸ ԶԵՐՄՈՐԵՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՆ ՏԱԼԻՍ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ ՍՄԿՊ ԿԵՆՏԿՈՄԻ ՈՐՈՇՈՒՄԸ «ԱՆՀԱՏԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ ԵՎ ՆՐԱ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՀԱՂԹԱՀԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

★ ★

★ ★ ★

★ ★

ՊԱՐՏԻԱՆ ԱՍՈՒՄ Է ԾՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Անհատի պաշտամունքը և նրա հետևանքները հաղթահարելու մասին ՍՄԿՊ Կենտրոնական Կոմիտեի Որոշումը Հայկեկտրոն գործարանի բանվորներին ու ծառայողներին միահամուռ հավանություն արժանացավ: Ընդմիջման ժամերին, հերթափոխության վերջում բանվորները խմբվում են ագիտատորների շուրջը և անկաշկանդ զրույցի ընթացքում ստանում իրենց հուզող հարցերի պատասխանները, արտահայտում իրենց մտքերը այդ կարևորագույն փաստաթղթի առթիվ:

— Պարտիան ժողովրդին միշտ ասել է ճշմարտությունը, — ասում է հավաքման տեղամասի վարպետ Լ. Արոյանը: — Այս անգամ էլ նա չէր կարող աչք փակել այնպիսի անթույլատրելի երևույթի հանդեպ, ինչպիսին մարքսիզմ-լենինիզմի ոգուն խորթ անհատի պաշտամունքն է:

Հենց այն փաստը, որ պարտիան համարձակորեն, բացառապես հարց դրանց վերացնել անհատի պաշտամունքը և դրա հետևանքները, համոզիչ կերպով ապացուցում է, որ պարտիան հաստատորեն կանգնած է լենինիզմի, սովետական քաղաքացիների իրավունքների պաշտպանության դիրքերում: Դա խոսում է մեր պարտիայի ոչ թե թուլության, այլ ուժի մասին, վկայում է անհատի պաշտամունքի հետևանքները մինչև վերջ հաղթահարելու նրա վճռականությունը: Ես ի սրտե հավանություն եմ տալիս և միանում Կենտրոնական Կոմիտեի Որոշմանը: Պատմական մեծ նըշանակություն ունեցող այդ փաստաթուղթը սովետական մարզկանց ոգեշնչում է դեպի աշխատանքային նորանոր սխրագործություններ:

— Սովետական մարզիկ օրինական կերպով հպարտանում են մեր երկրի համաշխարհային-պատմական հաղթանակներով, — ասաց 10-րդ ցեխի տեխնիկական վերահսկողության բյուրոյի պետ ինժեներ Խ. Պողոսյանը: — Սովետական հասարակարգը գնալով ավելի է ամրապնդվում, աննախընթաց կերպով մեծանում է նրա միջազգային հեղինակությունը: Սովետական ժողովուրդը, ավելի սերտորեն համախմբված իր հարազատ Կոմունիստական պարտիայի, նրա լենինյան Կենտրոնական Կոմիտեի շուրջը, համարձակորեն առաջ է գնում դեպի լավագույն ապագան՝ Կոմունիզմ:

Միահամուռ հավանություն տալով պարտիայի Կենտրոնական Կոմիտեի Որոշմանը, գործարանի կոմունիստներն ու անպարտիականները բազմապատկում են իրենց աշխատանքային եռանդը՝ ընթացիկ տարվա պլանները ժամկետից շուտ կատարելու, ՍՄԿՊ XX համագումարի որոշումներն անշեղորեն իրագործելու համար:

ՄՈՍԿՎԱՅԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԽՈՍՔԸ

Մոսկվայի վաղիմիր Իլիչի անվան էլեկտրամեխանիկական գործարանի կոմունիստ և անպարտիական բանվորներն ու ինժեներները ակտիվորեն քննարկում և լիովին հավանություն են տալիս «Անհատի պաշտամունքը և նրա հետևանքները հաղթահարելու մասին» ՍՄԿՊ Կենտրոնական Կոմիտեի Որոշմանը: Երկուշաբթի և երեքշաբթի օրերին ցեխերում անցկացվեցին այդ կարևորագույն փաստաթղթի ընթացքում: Միահամուռ հավանություն են ստանում ՍՄԿՊ Կենտրոնական Կոմիտեի միջոցառումները, որոնց նպատակն է հաղթահարել մարքսիզմ-լենինիզմին խորթ անհատի պաշտամունքը, վերացնել նրա հետևանքները պարտիական, այնպես որ իդեոլոգիական աշխատանքի բոլոր բնագավառներում, խստիվ կիրառել մեծ լենինի մշակած պարտիական կյանքի նորմաները և պարտիական ղեկավարման կոլեկտիվ սկզբունքները:

— Պարտիան լավ արեց, որ շրթերը սխալները, — ասաց մեխանիկական ցեխի կադրային բանվորուհի ընկ. Սեմյոնովան: — Մենք ընդհանուր ջանքերով ավելի արագորեն վերջ կտանք անհատի պաշտամունքի ծանր հետևանքներին:

Մեխանիկական հավաքման ցեխի պարտկազմակերպության քարտուղար բրիգադիր ընկ. Մալինինը ասում է.

— Մեր ցեխի բոլոր կոմունիստները գտնում են, որ ՍՄԿՊ Կենտկոմը միանգամայն ճիշտ վարվեց, վճռական պայքար մղելով անհատի պաշտամունքի

դեմ: Համարձակ ինքնաքննադատությունը մեր պարտիայի և սովետական սոցիալիստական կարգի ուժի և ամրության նոր վկայությունն է: ՍՄԿՊ Կենտկոմի կողմից մենք մրցություն կծավալենք վեցերորդ հնգամյա պլանի խնդիրների իրականացման համար:

Վաղիմիր Իլիչի անվան գործարանը մայրաքաղաքի առաջավոր ձեռնարկություններից մեկն է: Նրա կոլեկտիվը ՍՄԿՊ XX համագումարի որոշումներն ընդունեց որպես գործողությունների մարտական ծրագիր: Հունիսին, ինչպես և նախորդ ամիսներին, այստեղ հաջողությամբ կատարվեց արտադրական պլանը: Պայքար է ծավալվել տարեկան առաջադրանքը մինչև դեկտեմբերի 15-ը ավարտելու համար:

ՍՄԿՊ Կենտկոմի Որոշումը ջերմ հավանություն գտավ Ձերժինսկու անվան «Տրոյսկոդոնայա մանուֆակտուրա» կոմբինատի տեքստիլագործների բազմահազարանոց կոլեկտիվում:

Գործվածքային ֆաբրիկայի հերթափոխի վարպետ Ն. Ավդյուշինը ասաց.

— Մեր Կոմունիստական պարտիան ժողովրդին միշտ ասել է ճշմարտությունը: Հենց այդ ճշմարտությամբ, ժողովրդի հետ այդ միասնությամբ, լենինյան պատգամներին հավատարմությամբ էլ ուժեղ է մեր պարտիան:

Իր խոհերն ու զգացմունքներն արտահայտեց կադրային ջուզհակուհի Ա. Ալեքսեևան.

— Մենք ջերմ հավանություն ենք տալիս մեր պարտիայի Կենտկոմի Որոշմանը: (ՏԱՍՍ)

Է՛Լ ԱՎԵԼԻ ՍԵՐՏՈՐԵՆ ԿԶԱՄԱԽՄԲՎԵՆՔ ԼԵՆԻՆՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՇՈՒՐՁԸ

Լենինգրադ, 3 հուլիսի (ՏԱՍՍ). — Լենինգրադի և մարզի աշխատավորները լայնորեն քննարկում են ՍՄԿՊ Կենտրոնական Կոմիտեի Որոշումը «Անհատի պաշտամունքը և նրա հետևանքները հաղթահարելու մասին»: Կոմունիստները և անպարտիականները ջերմ հավանություն են տալիս և պաշտպանում են ՍՄԿՊ Կենտրոնական Կոմիտեի իմաստուն քաղաքականությունը, որի նպատակն է վերականգնել ու ամրապնդել պարտիական կյանքի լենինյան նորմաները և սովետական սոցիալիստական դեմոկրատիզմի սկզբունքները, բարձրացնել պարտիական կազմակերպությունների մարտունակությունը, ուժեղացնել պարտիայի մեջ կոլեկտիվ ղեկավարման դերը:

Կիրովյան գործարան... Այս փառաբանված ձեռնարկության կոլեկտիվը միշտ եղել է պարտիայի գլխավոր գծի կիրառման համար մարտնչողների առաջին շարքերում:

— Խոր գոհունակության զգացմունք է առաջ բերում ՍՄԿՊ Կենտկոմի Որոշումը, — հայտարարեց ցեխի պետ Միրոշնիկովը, որը մի շարք հանդիպումներ է ունեցել Վ. Ի. Լենինի հետ: — Ի. Վ. Ստալինի անձի պաշտամունքի համարձակ և բացահայտ հաղթահարումը վառ կերպով վկայում է մեր պարտիայի ուժն ու ամրությունը, համապատասխանում է մեր երկրում կոմունիզմի հաջող կառուցման շահերին: Մենք՝ հին կոմունիստներս, ջերմ հավանություն ենք տալիս պարտիայի Կենտրոնական Կոմիտեի Որոշմանը, որը հաստատ կանգնած է լենինիզմի պաշտպանության դիրքերում: Թող մոլեգնեն բանվոր դասակարգի թշնամիները, որոնք առասպելներ են հորինում կոմունիզմի «ճգնաժամի» մասին. նրանց երբեք չի հաջողվի շփոթություն մտցնել միջազգային կոմունիստական ու բանվորական շարժման շարքերում, թուլացնել սոցիալիստական լազերը:

ՍՄԿՊ Կենտկոմի Որոշումը աշխուժորեն քննարկեցին մետաղագործարանի աշխատավորները: Զրային տուրքիներին կոնստրուկտորական բյուրոյի բաժնի պետ Գեդոյարյովը հայտարարեց.

— Սովետական մարզիկ ամուր կանգնած կմնան իրենց շահերի պաշտպանության դիրքերում և է՛լ ավելի մեծ եռանդով կպայքարեն միջազգային լարվածությունը թուլացնելու, ամբողջ աշխարհի խաղաղության, աշխատավորների եղբայրական ինտերնացիոնալ կապերի ամրապնդման համար:

ՄԻՇՏ ՀԱՎԱՍՏԱՐԻՄ ՄԱՐՔՍԻԶՄ-ԼԵՆԻՆԻԶՄԻՆ

ՍՄԿՊ Կենտրոնական Կոմիտեի Որոշումը մեծ գոհունակությամբ դիմավորեցին Լենինականի աշխատավորները:

Քաղաքի արդյունաբերական ձեռնարկություններում տեքստիլ կոմբինատում, վագոնային և շոգեքարշային դեպոներում, գուլպա-տրիկոտաժի ֆաբրիկայում այն կարգում և մասսայականացնում են հարյուրավոր ագիտատորներ: Որոշման քննարկումը անցնում է պարտիայի անդամների ու անպարտիականների մեծ ակտիվության պայմաններում: Սովետական մարզիկ պատմական այդ փաստաթղթի մեջ տեսնում են պարտիայի անսահման հոգատարությունը աշխատավորների նկատմամբ, նրա հավատարմությունը մարքսիզմ-լենինիզմի սկզբունքներին:

Որոշման ընթացքում հետո շոգեքարշային դեպոյի նախապատրաստական ցեխի պղնձագործ Սուրեն ժամակոչյանը ասաց.

— ՍՄԿՊ XX համագումարը պատմական մեծ իրադարձություն հանդիսացավ պարտիայի և սովետական ժողովրդի կյանքում: Համագումարի որոշումներում կարևոր տեղ գրավեց անհատի պաշտամունքի դեմ հետևողականորեն պայքարելու հարցը: Եվ սա միանգամայն հասկանալի է: Անհատի պաշտամունքը հակասում է սոցիալիստական կարգի ընույթին, արգելափակում է սովետական դեմոկրատիայի զարգացումը և սովետական հասարակության դեպի կոմունիզմ տանող առաջընթացը: Ահա ինչու մենք բոլորս ողջունում ենք Կենտրոնական Կոմիտեի որոշումը, հավանություն տալիս պարտիայի հետևողական պայքարին, որը նա մղում է անհատի պաշտամունքի վնասակար հետևանքները վերացնելու համար:

— Սովետական կառավարության ներքին և արտաքին քաղաքականությունը, Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ մեր Հայրենիքի ձեռք բերած նվաճումները, — ասաց տեքստիլ կոմբինատի մանվածքային ֆաբրիկայի ցեխի վարիչ Խաչիկ Գրիգորյանը, — շփոթություն են առաջացրել իմպերիալիստական շրջաններում, որոնք ամեն տեսակ զրպարտություններ են հորինում Սովետական Միության և ժողովրդական դեմոկրատիայի երկրների հասցեին: Մեր որոշ սխալների խոստովանությունը ոչ թե մեր թուլությունն է, այլ մեր հզորության արտահայտությունն է: Կոմունիստական պարտիան դրանով մոբիլիզացնում է մասսաներին. նրանց ստեղծագործական ջանքերն ուղղում կոմունիզմի կառուցման մեծ նպատակին:

Աշխատավորներն ամենուրեք միահամուռ նշում են, որ Կենտրոնական Կոմիտեի Որոշումը նոր ուղիներ է հարթում մեր Հայրենիքի առաջընթացի համար, ավելի է համախմբում սովետական մարզկանց հարազատ Կոմունիստական պարտիայի շուրջը: